



Արմենիա
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ (ԴՊՈՒ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Փոխհատուցում ստացող անձ

Ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի վարորդ կամ ուղևոր հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց կյանքին, առողջությանը ՃՏՊ-ի հետևանքով պատճառվել է վնաս,

Ապահովագրական հատուցման չափը

Մարմնական վնասվածք ՃՏՊ-ի արդյունքում՝

Հատուցումն իրականացվում է համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ «Դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության կանոնների» (կախված վնասի բնույթից տոկոսային):

I, II, III խմբի հաշմանդամություն ՃՏՊ-ի արդյունքում՝

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ կախված ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձի բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում նշանակված հաշմանդամության կարգից.

Հաշմանդամության I կարգ նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 80%-ի չափով:

Հաշմանդամության II կարգ նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 60%-ի չափով:

ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԴԺՔԱՆՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշմանդամության III կարգ նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 40%-ի չափով:

Մահ ճՏՊ-ի արդյունքում՝

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով:

Եթե ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած ծախսերը հատուցման ենթակա են երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության պայմանագրով (ԱՊՊԱ և այլն), ապա Ապահովագրողը վճարում է միայն այդ պայմանագրով սահմանված հատուցման սահմանաչափը գերազանցող ծախսերը:

Ապահովագրական պատահարներ

Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության տարածքում տեղի ունեցած ճՏՊ-ն, որի հետևանքով Ապահովագրված անձը ստացել է մարմնական վնասվածքներ, ձեռք է բերել հաշմանդամություն կամ մահացել է, պայմանով, որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված տրանսպորտային միջոցում որպես վարորդ կամ որպես ուղևոր երթևեկելու ժամանակ:

Ապահովագրության տարածք

Հայաստանի Հանրապետություն

Ապահովագրական գումար, ապահովագրավճար, գործակալներին տրվող միջնորդավճարի չափ

Ապահովագրական գումար յուր. անձի համար	Ապահովագրված անձանց քանակ	Ապահովագրական գումար	Ապ. վճար
500 000	3	1 500 000	3 000
500 000	4	2 000 000	4 000
500 000	5	2 500 000	5 000
500 000	N (N>2)	N x 500 000	N x 1 000

Ոչ պայմանական չհատուցվող գումար-

Չի կիրառվում

Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ

Միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ՝

- Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթեր
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետ գրանցման վկայականը
- Հեռախոսահամար

Ապահովադրի (վարորդի) գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում՝

- Չտեղաշարժել ավտոմեքենան
- Չլքել, չթողներ, չհեռանալ պատահարի վայրից
- Չընդունել որևէ պատասխանատվություն
- Տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը կամ վարորդը պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը կամ վարորդը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին պատահարի մասին
- Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ իրականացնում է ապահովագրական հատուցումը